

108, '9): Այս սպասին դարձեալ պիտի հանդիպինք իւր աւելի կարեւոր տեղւոյն մէջ (Դ, 4, Ա):



Գ. ԽՈՂԱԿԵՐՈՑ

1. — Վայրը: — Նախորդներէն աւելի մերձաւոր ճաշարանին նիւթապէս եւ բարոյապէս, իւր դասական կոչումն էր «խոհակերոց» (Եզեկ. ԽԶ, 23. Եփրեմ ի Հյկզ.), եւ ստորինը՝ «խոհանոց» (Վարք Հրց. ի Հյկզ.), առաջինը պաշտօնէն (խոհակեր) եւ երկրորդը կերակրէն (խահ) ածանցուած: Իւր ընդարձակութիւնն համեմատական էր տան ճոխութեան հետ. սակայն հարկ չկայ յատուկ ձեւ մը փնդոել տեղւոյս, այլ տեսնենք իւր յօրինուածը կամ մասունքը՝ որոց մէջ իսկ կը կայանայ իւր էութիւնը:

Կրակարան: Այսպէս կոչուած է այն մասն՝ որոյ վրայ կերակուր կ'եփէին, հոմանիշ յն. ἐσχάραι (Առկ. ԻԶ, 21. Երմ. ԼԶ, 22, 23) կամ πυρεΐουի (ԵԼԲ, ԻԷ, 3): Անոր ձեւերը բազմակերպ էին ուրիշ ազգաց մէջ: Սակայն հոովմէականներէն պարզագոյնն՝ որով գուցէ հայկականին եւ